



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

2 նոյեմբերի 2011թ. թիվ 499

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ**  
**ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ**  
**ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.18 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. մարտի 24-ի «Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 11 արձանագրային որոշումը՝

Կ ա Ր Գ Ա Դ Ր ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզի սոցիալական պլանի մշակման նպատակով՝

1. Ստեղծել մարզային համակարգող խումբ հետևյալ կազմով՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Ստեղծել տարածաշրջանային աշխատանքային խմբեր՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Մարզային համակարգող խմբի ղեկավարին և տարածաշրջանային աշխատանքային խմբերին՝

Մարզում և համապատասխան տարածաշրջաններում մարզային համաժողովի ընթացքում վերհանված առկա սոցիալական հիմնախնդիրների հիման վրա մշակել սոցիալական ծրագրեր (այսուհետ ծրագրեր):

4. Խմբում ընդգրկված յուրաքանչյուր անդամ հավաքագրում է իր ոլորտին վերաբերող տեղեկատվություն և տրամադրում աշխատանքային խմբին՝ աշխատանքները հնարավորինս արդյունավետ կատարելու համար:

5. Տարածաշրջանային աշխատանքային խմբերի աշխատանքների կազմակերպման պատասխանատուներ նշանակել աշխատանքային խմբերում ընդգրկված համայնքների ներկայացուցիչներին:

6. Մարզպետարանի աշխատակազմի համապատասխան վարչությունների և բաժինների պետերին նշանակել ոլորտային պատասխանատուներ՝ իրենց ոլորտների մասով աշխատանքներին օժանդակելու համար:

7. Տարածաշրջանաին աշխատանքային խմբերի պատասխանատուներին՝  
Աշխատանքներին հնարավորինս մասնակից դարձնել շահագրգիռ  
հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

8. Աշխատանքային խմբերի կողմից սոցիալական ծրագրերի մշակման  
վերջնաժամկետ սահմանել 2011թ. նոյեմբերի 3-ը:

9. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի  
աշխատակազմի ղեկավար Ա. Մանուկյանի վրա:

10. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2011թ. նոյեմբերի 2  
ք.Վանաձոր



Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ